ԱՐԱՐԱՏ

ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Կը հրատարակուի ամեն ամսոյ 10ին, 20ին և վերջին։ Սարգսեան տպարանի մեջ։ Կ=Պոլիս։ Ընդհանրապետ Ընդերամիան Ընդերարանը։ Մեծ Դարի Խան մի վերի դռան թիւ 6։ Զմիւռնիա։ Հալաբիոյ Ընդերամիան գրասենեակը։

Տարեկան գինն է 100 ղրուշ։
Վեցամսեայ „ 60 „
Մէկ թիւին „ 4 „
Ոչ թիւին ոսկի մի դրամ։
Դուրս երթալի արտաքին ճամբու ծախքը առանձին վրայ է։

Ծանուցումը մէկ անգամի համար պողին 100 է
„ երեք „ 80 „
„ երեք „ 60 „
Մեծ տպագիրներով և խոշոր գիրերով եղած ծանուցումներու տարիք առանձին։

ԱՊՐԻԼ 10 Ե. ՏԱՐԻ 1861 ԹԻՒ 130

ԽՆԴԻՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՆՔԻ

ԱՌԱՋԻՆ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՔ

Երուսաղէմի Պատրիարքի վախճանէն ետքը նոր Պատրիարքի ընտրութեան հետ Միաբանութեան խնդրանաց և Սահմանադրութեան պահանջմանն համեմատ Ազգային Վարչութիւնը վանքին վարչութեանն համար բարեկարգ կառավարութեան կանոնադրութիւն մը շինեց։

Այս կանոնադրութեան և ուրիշ կարեւոր որոշմանց համար շատ դիմադրութիւններ տեսնելով ելանք գաղանի և յայտնի եղածները պատմեցինք։

Այսր վրայ ըսեցինք որ մօտ օրերս մեզի դէմ Երուսաղէմէն (ամբողջ միաբանութենէն. — ասի լաւ ջնջիտեանք) բողոքոց տպագեալ տետր մը եկած է Ազգային Ընդհանուր ժողովին ուղղված։

Այս բողոքին տետրը ձեռքերնիս տակաւին չհասաւ նէ ալ՝ բովանդակութեանը գրեթէ բաւական տեղեկացանք՝ ընթերցողներէն լսելով. ուստի անոր պատասխանել կամ լաւ ևս ըսել, անոր արժէքը ցուցնել պարտք սեպեցինք. և այս պատճառաւ կ'ուզենք նախ այս խնդրոյն վրայ առաջին եղելութիւնները աւելի ընդարձակ գրել՝ մեր ամեն խօսքերը Ազգային Քաղաքական և Խառն ժողովոց ատենադպրութիւններէն քաղելով, որոնց համար բաւական ժամանակ անցուցինք վերջին օրերս՝ Պատրիարքարան. և յետոյ բողոքին անցնինք պիտի։

Ամենուն յայտնի է թէ Աստուածային օրհնեալ կամքը Սուրբ Երուսաղէմի աթոռը քիչ միջոցի մէջ եռապատիկ սուգ զգեցաւ։ Այսր հետ ալ նորոգվեցաւ նոյն Աթոռին բարեկարգութեան փափուկ և կարեւոր խնդիրը, որ Սահմանադրութեան հաստատվելէն առաջ քանի մը անգամ երկար խորհրդածութեանց նիւթ եղած էր Ազգային կառավարութեան՝ միշտ ապարդիւն մնալով։

Սահմանադրութիւնը գործադրվելու ընկալելէն անմիջապէս ետքն ալ Ազգային Վարչութեան ներկայացան բազմաթիւ ստորագրութիւններով աղերսագիրներ կամ բողոքոց գիրեր՝ սա նպատակով որ յիշեալ աթոռին միաբանութեան սահմանադրական բարեկարգ վարչութիւն մը (որուն շատ կարօտ է) տրվի և ազգային համար անոր պայծառութիւնն ու յառաջդիմութիւնը ապահովցվի։

Այս աղերսագիրներն ու բողոքները տարբեր ծանօթ են շատերուն։

Բայց Ազգային վարչութիւնը դեռ նոր կազմվելու վրայ ըլլալով ամեն բանէ առաջ Կեդրոնական Վարչութեան կարգադրութեանց զբաղելը իրեն պարտք համարած՝ չը կրցաւ այս իրաւացի բողոքներուն վրայ խորհել։ Այսպէս ըրած է նաեւ թէ ուրիշ մասնաւոր անձանց և թէ նոյն իսկ Երուսաղէմի Վանքին Միաբաններէն ողջամիտ անձանց բողոքներուն համար, որոնք իրաւացի տրամութեամբ կը լեցնէին Վարչութեան անդամոց սիրտը։

Այս տրամութիւնը բնականաբար բազմապատկված է այն ատեն, որ Ազգային Ընդհանուր ժողովոյ Ատենապետը Երուսաղէմէն դառնալուն Աթոռոյն Վարչութեան

ու միաբանութեան բուն վիճակին նկարագրութիւնն ըրեր է Քաղաքական ժողովին։

Այս նկարագրութեան պատճառած տըխուր տպաւորութեան ներքեւ՝ Յունվարի 11ին ըրած նիստին մէջ յանկարծ լսեր է Երուսաղէմի Պատրիարքին վախճանը։

Այն օրը Քաղաքականը Նախագահութեամբ Ս. Պատրիարքի՝ խնդրին ամէն պարագաներուն վրայ խօսակցելով՝ երկար խորհրդածութիւններէ ետքը որոշեր են, որ Զմիւռնիոյ առաջնորդ Թագթապեան Պօղոս Արքեպիսկոպոսը առժամանակեայ կերպով Միաբանութեան Գլուխ կենալու եւ Վանքը պաշտպանելու համար Երուսաղէմ երթայ երկու պատուաւոր աշխարհականաց հետ, որոնք հետեւեալ նիստին ընտրուելու եւ քննիչ ղըրկուելու են եղեր Վանքին Միաբանութեան վիճակին ՚ի պաշտօնէ քննելու։

Այս որոշումը նոյն օրը Պատրիարքին կողմէն հեռագրով իմաց կը տրուի վերոյիշեալ Եպիսկոպոսին եւ կը պատուիրուի, որ ճանապարհորդութեան պատրաստուի դէպ ՚ի հոն ու շոգենաւով իրեն համնելիք հրահանգներուն սպասէ։

Երկու օր ետքը այսինքն Յունվար 13ին Քաղաքական ժողովը արտաքոյ կարգի նիստ մը ընելով այս խնդրոյն վրայ կրկին անգամ աւելի հասուն խորհրդածութիւններ ըրեր եւ երկար վիճաբանութիւններէ ետքը, նախընթաց նիստին որոշումը միաձայն հաստատեր է կատարեալ կերպով։

Ուստի Պօղոս Եպիսկոպոսէն Պատրիարքական հեռագրին պատասխանը դեռ եկած չըլլալուն՝ կրկին հեռագրով հարցուեր է իրեն թէ «մինչեւ նոր Պատրիարքի ընտրութիւնը կատարուիլը, իբր առժամանակեայ Նախագահ Միաբանութեան, Երուսաղէմ պիտի երթա՞յ թէ ոչ»։

Այս նիստին մէջ չորս պատուաւոր աշխարհականներ նշանակուեր են, Քաղաքական ժողովոյ ատենադպիրը, Տնտեսականին ատենապետը, եւ ուրիշ երկու անձեր, որ յաջորդ նիստին հրաւիրուին՝ եւ եթէ իբր համարատու քննիչ Ազգային Վարչութեան կողմէն Երուսաղէմ երթալու յանձնառու ըլլան՝ անոնցմէ երկուքը պիտի ընտրուին եղեր գաղտնի քուէարկութեամբ։ Նոյն միջոցին ազգային ժողովականներէն մեծ անձ մ՚ ալ յայտներ է թէ այն չորս ընտրելիներէն միայն մէկը ընդունի նէ՝ ինք ալ անոր հետ երթալու յանձնառու կ՚ըլլայ։

Նոյն օրը դարձեալ երեք աշխարհականներէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմըւեր է, որ Երուսաղէմի աթոռին վարչութեանը համար Ազգային Սահմանադրութեան համեմատ կանոնադրութեան հիմնագիր մը խմբագրէ ու քննիչներուն համար հրահանգներ պատրաստէ։ Այս օրուան նիստին մէջ սա ալ որոշուեր է, որ Քաղաքական ժողովը իր հետեւեալ նիստին Կրօնական ժողովն ալ հրաւիրէ ՚ի խորհրդակցութիւն։

Ուստի Յունվար 20ին Խառն ժողով ըլլալով հոն կարդացուեր է յանձնաժողովին պատրաստած հիմնագիրը եւ Կրօնական ժողովին յանձնուեր է, որ ինք ալ առանձին քննէ ու անոր վրայ իր դիտողութիւնները ընելով յաջորդ նիստին բերէ՝ Խառն ժողովով նորէն քննուելու համար։

Նոյն միջոցին Պօղոս Եպիսկոպոսէն պատասխան առնուեր է թէ անձնական ախրութեան պատճառաւ Երուսաղէմ չպիտի կրնայ երթալ. եւ որովհետեւ Սէթեան Յովհաննէս վարդապետին կողմէն դիտողութիւն մը կամ լաւ եւս առաջին ընդդիմութիւն մը եղած է թէ հոն Եպիսկոպոս մը ղրկելը կասկած կրնայ տալ, որ Միաբանութեան կամաց հակառակ՝ պատրիարք ըլլալու համար երթայ, ժողովը այսպիսի անհիմն կասկածները նախադուշակելով փարատելու միօք՝ կանոնադրութեան հիմնագիրին մէջ դրուած քանի մը յօդուածներուն ակնարկելէն ետքը առաւել միամտութեան համար արժան դատեր է, որ Երուսաղէմ երթալու երկու աշխարհական քննիչներուն հետ, Եպիսկոպոսի տեղ, ուրիշ բանիբուն եկեղեցական մը ղրկուի. վասն զի մտածեր է որ այն ատեն Աւագ Լուսարար Գէորգ եպիսկոպոսը, դեռ կենդանի ըլլալով, կրնայ Նախագահութիւն ընել Միաբանութեան՝ մինչեւ նոր Պատրիարքի ընտրութեան կատարուիլը։

Այն նիստին չորս ընտրելի քննիչներէն երեքը իրենց անձնական զբաղմունքներն առաջ բերելով Երուսաղէմ չկրնալ երթալնին յայտներ են. Իսկ Տնտեսական խորհուրդին ատենապետը ժողովին ներկայացած չըլլալով զինքը համոզելու եւ հետեւեալ նիստին հրաւիրելու համար ժողովականներէն մէկ քանիին միջնորդութիւնը խնդրուեր է։

Յունվար 27ին դարձեալ Խառն ժողով գումարուելով Կրօնականին կողմէն խմբագրըւած կանոնադրութեան ուրիշ հիմնագիր մը կարդացուեր է, որ Քաղաքականին առաջուց շինածին երկու գլխաւոր կէտերուն բոլորովին հակառակ եւ միանգամայն Ազգային Սահ-

մանագրութեան տրամադրութեանց անհամաձայն (երկրորդ ընդդիմութիւն) ըլլալուն համար՝ երկու հիմնագիրն ալ յանձնուած է երեք եկեղեցական երեք աշխարհական անձերէ բաղկացեալ խառն յանձնաժողովի մը, որ յիշեալ անհամաձայնութիւնը ուղղէ։ Նոյն միջոցին Սէթեան Յովհաննէս վարդապետը Բաղաքական ժողովին ներկայացուցեր է 'ի դիմաց Կրօնականին նեղվքի գիրք մը, որուն քանի մը տողերը կարդացեր է 'ի լուր ժողովականաց (երրորդ ընդդիմութիւն)։ Այն տողերը, որ խղճահար սիրտերուն սպառնալու մտքով կարդացուեր են, բացատրելով հակառակ ազդեցութիւն մը ըլլալ ու նոյն սիրտերը հանդարտեցնելու ծառայեր են. վասն զի բացատրութենէն յայտնապէս հասկցուեր է, որ յիշեալ նեղվքը կ'ելնայ նախ՝ Երուսաղէմի ամթոռին վրայ Միաբաններէն դուրս Պատրիարք նստեցնողին, երկրորդ՝ վանքին միաս հայցնողին և երրորդ՝ Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները միացնողին։ Ուստի Բաղաքական ժողովը հրաւիրեր է յիշեալ վարդապետը և իւր խորհրդակիցները, ցուցնելու թէ այն իրեք կէտերուն մէջ կայ իր անօրէնութեանց մէջ։ Եւ որովհետեւ և մէ մէկը կրցեր է ցուցնել՝ եղած որոշման նոյն նեղվքէն ազատ ըլլալը Կրօնական ժողովն ալ միաձայն հաստատեր է խառն ժողովին մէջ։

Նոյն օրը ներկայացեր է նաեւ Տնտեսական խորհուրդին առեւնագրեալ, որ չորս ընտրելի քննիչներէն մէկն էր, և 'ի սէր Աղէին, անձնուէր սրտով դէմ ելլելով Ժողովին թաքնանձնայոյզ, ընդուներ է իրեն առաջարկուած պաշտօնը, զոր պիտի կատարէ եղեր ընկերութեամբ միւս անձնուէր ժողովականին, որ երկու նիստ առաջ այս մասին ալ Աղէին ծառայելու ազդասիրական յօժարութիւնը յայտնած և շնորհակալութեամբ ընդունեալ էր։ Նոյն միջոցին՝ Կրօնական ժողովը յայտներ է, որ չուզեր յիշեալ երկու աշխարհական քննիչներուն հետ՝ Երուսաղէմ ղրկուելու և կեղեցականը ընտրել, մինչեւ որ Ընդհանուր ժողովը չգտնուի. և չէ ուզեր համոզուիլ որ այս մասին Բաղաքական ժողովը գործադրական իշխանութիւն ունի ըստ Սահմանադրութեան, և խառն ժողովոյ հեղինակութիւնը բաւական է (չորրորդ ընդդիմութիւն)։

Փետրվարի 3ին Բաղաքական ժողովի նիստին, այսինքն Երուսաղէմի Պատրիարքին մեռնելէն քառասունեւերկու օր ետքը, Միաբանութեան կողմէն ուղղակի առ Աղգային Վարչութեան եկած երեք պաշտօնական նամակներ կարդացուեր են մի և նոյն բովանդակութիւնքն Յունվարի 1էն գրված (որոնց այսչափ ուշ դալը ուշադրութեան արժանի է)։ Առաջին նամակին մէջ միաբանութիւնը ծանուցեր է Պատրիարքին յանկարծահաս մահն ու փառաւոր թաղումը։ Երկրորդին մէջ խոստացեր է ինչ որ ցարդ պակաս է, այսինքն ամեն բան բարեկարգել, յարգել Յաւանգարոյ Վարչարան հաստատել, Բանգարանն ու պարտանը ծաղկեցնել, և այլն։ Երրորդին մէջ նոյն խօսքերը կրկնելով, խոստացեր է հիանդանոց ալ կանգնել և Աղգային Սահմանադրութեան համեմատ իր պարտաւորութիւնները կատարել և միանգամայն խնդրեր է, որ Աւագ Լաւարար Գէորգ Եպիսկոպոսը Պատրիարք կարգուի, վասն զի (կը խոստովանի եղեր նոյն նամակը) ուրիշ արժանաւոր պատրիարքոյ չկայ Միաբանութեան մէջ։

Բաղաքական ժողովը, Աւագ լուսարարին Պատրիարք չընտրելու ուխտեալ և երդուեալ ըլլալուն վրայ դիտողութիւն մը ընելէն, և այս մասին Միաբանութեան կողմէն աւանդութեանց անհաւատարմութիւն կամ անհոգութիւն ցուցվելուն վրայ զարմանք մը յայտնելէն ետքը, հարկաւոր դատեր է, որ ըստ Աղգային Սահմանադրութեան դատանի քուէարկութեամբ նշանակված երեք ընտրելիներու վրայ ցուցակ մը ուղղի Միաբանութենէն, յատուկ ստորագրեալ տեղեկագրով մը (արդեօք եկած գիրերուն ստորագրութիւնները կասկածի տեղի տուեր են)։

Յիշեալ երեք նամակներուն պահանջին մէջ, դարձեալ նոյն թուականով տպված, կանոնագրութեան հիմնագիր մ'ալ դոնեցեր է, որուն վրայօք ամենեւին խօսք մը չկայ եղեր երեք գիրերուն մէջ. ուստի և մեծ զարմանք տուեր է, որ Միաբանութիւնը, Դեկտեմբերի 24ին Պատրիարքը թաղելէն ետքը, բնականաբար մեծ շփոթութեան մէջ ըլլալով, կարողացած ըլլար շքիոան մը մէջ կանոններ պատրաստելու, տպելու և Յունվարի 1ին Կոստանդնուպոլիս ղրկելու։

Ինչ և իցէ նոյն յանկարծահաս կանոնագրութիւնն ալ խառն յանձնաժողովին ղրկուեր է՝ միւս երկու հիմնագիրներուն հետ մէկ տեղ քննելու համար և որոշեր է քաղաքական ժողովը որ հետեւեալ նիստին ալ կրօնական ժողովը հրաւիրվի։

Ուստի Փետրվար 10ին Բաղաքական ժողովը խառն ժողովին գումարվելէն քիչ մը առաջ Երուսաղէմէն նոր եկած ուրիշ նամակ

մ'ալ կարդացեր է Յունվարի 25 պղտու-նեալ Թուականով։ Այս նամակին մէջ՝ Միաբանութիւնը ծանուցեր է աւագ լուսարար Գէորգ Եպիսկոպոսին և գաղտաբնակ Անդրէաս Վարդապետին ալ յանկարծամահ ըլլալը և Յունվարի 16ին 'ի հող դրվիլը, միանգամայն յայտներ է, որ Միաբանութիւնը "որբ և այրի և անգլուխ մնացած ըլլալով՝ վանքի մէջ կը գտնուի, ուստի և խնդրեր է գլուխ մը կարգել անմիջապէս"։

Այս յուսահատեցուցիչ դժբաղդութեան վրայ Քաղաքական Ժողովը վայրկեան մը չէ վարաներ որոշելու, որ ամիս մը առաջ իր ըրած կրկին որոշմանց համաձայն՝ շուտով նշանաւոր Եպիսկոպոս մը Երուսաղէմ երթայ, որպէս զի մինչեւ նոր պատրիարքի ընտրութիւնն ու հաստատութիւնը (որ բաւական երկար ատենի կարօտ էր, ինչպէս կը տեսնի այսօր) Միաբանութեան նախագահութիւն ընէ, առաջիկայ Զատկի օրերը ուխտաւորները մխիթարէ, կանոնադրութեան գործադրութիւնը ապահովցնէ և պատրիարքութեան արժանաւորագոյն երեք ընտրելի միաբանները գտնելու քուէարկութեամբ ընտրելու գործողութեանց Ազգային Սահմանադրութեան համեմատ ըլլալուն հսկէ։

Այս որոշումը կրօնականին ալ հաղորդւելով՝ խառն Ժողովի համաձայնութեամբը հաստատուեր է, թէպէտ Երուսաղէմի փոխանորդին և թէ պատգամաւոր Միաբանութեան կողմէն եկող Յակոբ Վարդապետին անիմանալի ընդդիմութեանը հանդիպեր է. այս ընդդիմութիւնը առաւելապէս անոր համար զարմանալի երեւցեր է, որ Միաբանութեան նամակներուն իմաստին բոլորովին հակառակ էր։

Վերջապէս այս կարեւոր և ստիպողական որոշումը ընդունելով՝ խառն Ժողովը Երուսաղէմ ղրկելու Եպիսկոպոսին ընտրութեանը աշխատեր է. բայց կրօնականներէն ոմանք Գումգաբուի Տէր Գէորգ քահանային բերնով, Ազգին Եպիսկոպոսներէն մէկուն ալ (բաց 'ի Սարգիս արքի և Յակոբ նախորդ Պատրիարքներէն) հաւատարմութիւն և վըստահութիւն չըցուցընելու խօսքեր ըրեր են (հինգերորդ ընդդիմութիւն)։ Ասոր համար հետեւեալ ուրբաթ օրը Ընդհանուր Ժողով գումարել և ընտրութիւնը Ազգային Երեսփոխաններուն ձեռքով ընել որոշեր է։

Փետրվար 17ին Ընդհանուր Ժողովին գումարմանէն ժամ մը առաջ՝ Կրօնական և Քաղաքական խառն ժողովը վերջին նիստ մը ըրեր է, յատկապէս խառն Յանձնաժողովին պատրաստած կանոնադրութեան հիմնագիրը կարդալու համար և ուշի ուշով քննելով զայն քանի մը յաւելուածով ընդուներ և բոլոր ներկայ անդամները ստորագրեր են, ընդ որս և Երուսաղէմի փոխանորդ Սահակ վարդապետը։

Այն յատուկ և կարճատեւ նիստին՝ Երուսաղէմէն եկած ուրիշ նամակ մըն ալ առեր է Քաղաքական Ժողովը Փետրվար 2ին գրված, որով Միաբանութիւնը շաբաթ մը առաջ գրած և յատուկ պատգամաւորի ձեռքով ղրկած նամակին պատասխանն առնելու չսպասելով՝ անոր իմաստին հակառակ Երուսաղէմի փոխանորդ Սահակ վարդապետին Պատրիարք ընտրվիլը խնդրեր էր։ Այս նամակը բնականաբար առջիններէն աւելի զարմանք տուած է և հասկցնելով թէ մասնաւոր նպատակի մը ծառայելու համար եղած է, և մանաւանդ վայրկեան մը առաջ ստորագրված թէ յատուկ կանոնադրութեան և թէ Ազգային Սահմանադրութեան անհամաձայն գտնվելով՝ մէկդի ձգվելն ու միայն իբր յիշատակ պահվիլը արժան դատվեր է։

Այս համառօտ պատմութենէս, զոր ինչպէս վերը ըսինք, Քաղաքական Ժողովին ատենադրութիւններէն քաղած և տեղ տեղ արժանահաւատ աղբիւրներու տուած ծանօթութիւններով լրացուցած ենք, յայտնի կը տեսնեն ընթերցողք, թէ Քաղաքական Ժողովը, բերկրալիր սրտով կ'ըսենք մինչեւ ցարդ տեսլածներուն մէջ Ազգին օգտին ու յառաջդիմութեան բաւական աշխատող առջին Ժողովը. Երուսաղէմի Պատրիարքին վախճանելէն թէ առաջ և թէ ետքը իր խորհրդածութեանց և զբաղմանց առջին կարգը դըրեր այս նիւթը և խառն ու անխառն ութ նիստերուն մէջ երկար խորհրդածութիւններ ընելով, մեծ խոհեմութիւն և զգուշութիւն բանեցնելով, տարաձայնութեանց և մասանջութեանց առիթ չըտալու համար մեծ հոգ և խնամք տանելով, ամէն ընդդիմութեանց երկայնմտութեամբ առաջքն առնելով, Ազգային Սահմանադրութիւնը կարելի եղածին չափ պաշտպանելով կարող եղեր էր գործը այն աստիճան հասցնելու, որ Ընդհանուր Ժողովը նախ մեծ շնորհակալութիւն մը պիտի մատուցանէր Քաղաքական Ժողովին և յետոյ իր ընտրութիւնը պիտի ընէր։ Եւ կը յուսացվէր թէ անպատճառ Ընդհանուր Ժողովը պիտի փութար հաստատելու խառն Ժողովին որոշումը. վասն զի արդէն ուղղակի

կամ անուղղակի շատերուն ականջը հասած էր Քաղաքական ժողովին ազգօգուտ անօրէնութիւնները, որոնց կատարումը Ազգին ապագային ալ անդորրութիւն և նեղութեան կամ փրկութեան վանգի կանխաւ դիմակալութիւն կը խոստանար։

Բայց ընդհանուր ժողովը ճանչցաւ ասոնց յարգը և կամ հասկցաւ գործը կամ լաւ թէ վատ անօրէնութիւն ըլաւ Քաղաքական ժողովին որոշումը փոխելով ասի կը թողուն՝ք խելամտել մեր ընթերցողներուն, որոնց կանխաւ նկարագրած ենք այն ցաւալի կերպարանքը, զոր զգեցաւ Սահմանադրական Ազգային ընդհանուր ժողովը, երբ այս որոշումը առաջադրվեցաւ . . . . . .

Նախապատրաստական անկարգութիւնը այն չափ խռովեց այն պատկառելի ժողովը, որ Ազգային Նրեսփոխանաց ողջամիտ մասը կարող չեղան գտնել Քաղաքական ժողովին սեղեկութիւն ուղելու իր որոշման պատճառներուն վրայ, որով պիտի պարզվէր ամեն բան և ան ատեն ամեն մարդ պիտի ճանչէր այն որոշման կարեւորութիւնը . . . . . .

Քաղաքական ժողովը, որ ինք կ'զգար անոր անդրադարձութենէն առաջ գալու վնասը, մեծ ցաւ զգաց անշուշտ իր որոշին մէջ Ազգին համար և եթէ իր խիղճը հանդարցնող ու սիրաը մխիթարող բան մը ունի՝ նէ՝ սա է՝ որ ինքը իր պարտքը կատարեց և պատասխանատուութենէ ազատ է այսօր։

Այս եղելութեանց մեծագոյն մասին անտեղեակ՝ Նրուսաղէմի վանքին միաբանութիւնը բողոքոյ տեսը կը տալ մեզի դէմ՝ և մեզի հետ շատ ողջամիտ Հայերու դէմ։ Ասոր ալ արժէքը կը տեսնենք։ Առաջիկայ թուով։

ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԱԲԱՆ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՆՈՒՑ

Այս այն անձն է, որուն հետ ասկէ երեք չորս ամիս առաջ շատերս կը տեսակցինք և առաջին անգամի տեսութենէն խսկոյն սերտ սիրով կը կապվէինք. անխոնջ աշխատասէր, լուսաւորեալ ազգասէր անձ մը, որ երբէք չէր գադրեր ինքզինքը վարժելէն և կրթելէն նորանոր ուսմունքներով ու արհեստներով և Նրուսաղէմի վանքին պայծառութեանը թէ բանիւ և թէ գործով աշխատելէն. իր օրինակովը կը քաջալերեր ուրիշ Միաբանները նեղ օրերուն մէջ և Վանքին իրեն չքնաւածը ինքը իրեն և իր եղբայրներուն տալու կ'աշխատէր։ Հոս Պօլսոյ մէջ այլ և այլ արհեստներ ուսաւ, որով նախանձելի եղած է արդ Նրուսաղէմի մէջ ուրիշ քրիստոնեայ ազգայ եկեղեցականներուն. վանքին Թանգարանը բարեկարգեց, և հոս Պօլսոյ ամեն լաւագրաստեղներէ գրեթէ մուրալով լաւագիր ձարեց վանքի Ընթերցարանին, ըսել է՝ իր եղբայրներուն. մուրալով ըսինք վասն զի ինք սուակ չունէր, վախճանող Պատրիարքն ալ անոնց ընթերցման համար լաւագիրի սուակ չէր տար։

Այս արժանապատիւ անձը, որ թէ Պատրիարքին կենդանութեան ատեն և թէ վախճանելէն՝ ի վեր միշտ ցարդ գրեթէ բոլոր երիտասարդ և լուսաւորեալ Միաբաններուն պաշտպան ու հայր եղած է, Պօլսեն մեկնած օրերը «Մեղուիդ ընծայ մը պիտի ընեմ» ըսած էր մեզի։ Հազիւ Նրուսաղէմ հասած՝ իր ընծան ճամբու դրեր էր։ Ասի հետեւեալ տարն է, զոր ճամբորդութեան տարտղնացուցիչ օրերուն մէջ գրեր է։ Այս ընծան շնորհակալութեամբ ընդունեց Մեղուն, և փափաքեցաւ իր ընթերցողաց ալ հաղորդելու. բայց ձեռագիրը կորուսված ըլլալով միշտ ցարդ մնաց՝ ու այս օրերս գտնվելով ահա կը փութայ իր ընթերցողաց ընծայելու։

Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԵՀ ՀԱՆԴԻՍԻ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Յիսուս անունն մեր փրկողին այսօր ԼՀեալ՝ ի խաչարէ՝.
Զոր կանխագոյն բաղխմամբ երգողն անդէն դիպոյց՝ ի քնար։
Յայս նկատեալ Նահապետաց միջ ՅԱգամոյ ցվէց դար,
Զի ցօղ երկնից հնարհաց հարուստ տայցէ մեզ Տէր բարեբար։
Երկնաթռիչ զոքք վիցթեւեան պար բաղարեալ՝ ի յերկին,
Թեւակոխեալ ընդ յօդս ճախրել գալին զանուն Անեղին։
Ի գուշակաց յանկարծագէպ մի ամն սեսեալ զայս սեսիլ,
Բարձրաբարբառ ընդ տիեզերս հռչակաբար գոչ բերիլ։
Սեան ամպելոյն գալ՝ ի սեսիլ հուր վիգակուն սահարկու,
Ո՞ սեսանող գոյ՝ ի հնուն ըստ այս սեղեան լու՝ ի լու։
Հայեաց ուրեմն կանխագիտաց զիմարդ են քանք գուշակաց,
Զմիածնին սունեալ ծանօթ գալուստ բոլոր իսկ ազգաց։
Ա՛ռ զպատգամն ուշն հոգեւոր ինձ զԵսայեայ՝ ի քնարն,
Զի մեզ մանուկ ասէ ծնեալ որդի տուաւ միածին։
Էմմանուէլ անուն կոչեալ Աստուած ընդ մեզ ի յերկրի,
Զ իշխանութիւն յուսոյն վերայ կրէ զանյաղթն իսկակի։
Յայտանկնար բիբ կերպիքք սուաւանեալ յօդս երթերին,
Յանուանս ախտ հատեալ լերանց զայն ընծայ մեզ սուրբերին։
Գայր ցանկալին գարուն հոգւոց կէս հատանէր փրկանաց,
Ի յարմատայն Յեսսեայ բղխեր աղբիւր սիրոյ ջուր կենաց։
Ի բերան արծաթատպատ զի՞նչ աղաւնւոյն սատ ձիթայ,
Զի՞նչ առ նուէր նշոյ՝ ի տարան սատ առանութիւն բերելոյ,
Զի՞նչ ժողովել յաւերդի առ սատ մանկան աւուր լուսի,
Զի՞նչ յայտնագոյն Աստուածորդւոյն քան օրինաց թղթատուսն։
Վաղաժամն իսկ Յիսուսի ահա պատիերն՝ ի ցուցակ,
Զի կանխատիպ նմանութիւնք առ հանդերձեալս հրաւիրակ։
Պատգամն՝ ի քեզ կանխաբարբառ ահա ընուն գուշակեց,
Զոր մանկացեալդ զոք են յայտնիչք բարեմտութեամբ կանխասաց։

Արին Դաւիթ յանձն առ երթալ առեալ զքարինս անվնասիր,
Ճակատ տուեալ ընդ սլաղդին քաջամարտիկ խիզախեր.
Ի գաշտ մարտի յանուն Յիսուս ուժգին գոչէր պատանին,
Հարեալ զինուին պարսաւարի արկ զայն դի յուրա 'ի գետին։
Բարձնօրէն գոչարիլ 'ի պար 'ի սէր վհիդ դայլոյկ,
Խմբիլ 'ի ոտն յանուն Փրկչին ղՆ՝ նշ ակմբիս երկանիկ.
Ո՛հ բարերար պսակ գահիս կայ միշտ անթարձ ապդատեր,
Ի սէր որդւոյս շնորհ ունիլ այր վասն մաղթի Քրիստոսի Տէր։
Դիրուագ տօնիս թրիատութեան ոգի այսօր մարտս մեր,
Ընդ այսմ և մեր տաւիղ առեալ ուխտիւք մատչիմք առ վեհ Տէր.
Ո՛հ ապա զի կեցցի ոգեմք կեցցի գլուխս մեր արդար,
Տալ 'ի սրինգ երգոյ քնար գեղգեղ տաւիղն բարերար։
Արիւք հրաւէրք մանկունք գրոհիս արիք ո՛հ գոռք բազմերամ,
Մատչիլ առ Տէր ո՛հ նոր սիրոյս յայտնոր կացուրդ Յիսուսեան.
Վասն մանկան թրիատեալ ընծայ նուէր ձօն սուրբ սէր,
Յօդիլ 'ի գլուխս հայրապետիս որ բազմեալ կայ արդեսէր։
Պանեալ զարդուքք ծաւք գիւցազանց լերինք մայրից գոնդոյն,
Նարդոս քրքում՝ հաւուք ընծայ բուրին զհոտ սիրելւոյն.
Զայնք ծափաձայնք ուժգին հնչի առ գահակալդ 'ի նուէր,
Իսանձարաւ յերդս օրհնելոյն զայսմանեալն Աստուած գեղգեղէր։
Եկ դու ո՛ Տէր ըստ քոյդ կամայ ատեն լարեա զիմբ քնար,
Փափաքանաց տուր հատանել 'ի շնորհ Տնկիդ 'ի կատար.
Հոգի անեղ անունդ Յիսուս հուր կիզիչ ես արտի,
Զհամայն կամաւս վառ բարբաքեա 'ի տունչ տեսոյդ ցանկալի։
Տեսաւն հիւսել պսակ յսակիւղ ճահ ոգեվառ զուարթնոց,
Զի՞նչ է բարբառ զի՞նչ բան արտի թէ յաւելուած խորհրդոց.
Մեղաւանման մատչիմք 'ի տես խուռն ժողովս սուրբ ուխտս,
Զքնաղ վհիդ կահեալ սեղան սէր նոր մանկան զուարթս։
Էր արդ առնուլ ձօն նուաստս 'ի սէր անուն Յիսուսս,
Տիար մատոյս գոգցես մեր են նուէր հակիրճ արգասիս.
Զօնք ձօնեցաւ կանխաւ երկուս պայծառ քան զայս և բարթամ,
Վեհ իմ ընկալ երրորդ և զայս յաւերժ կացեալ հարատաս ամ։

Բաղկատարած մաղթարկու։ Ի սակս վհիդ արեւս։
Տեառն ծառայ աբեղայս։ Կոչի յանուն Եսայեան։

Այս երգը մեզ աւելի անոր համար կ'ուրախացնէ որ Երուսաղէմի միաբաններուն մէջ, ինչպէս առաջիկայ թուով պիտի ցուցնենք, իրենց ստորագրութիւնն անգամ գրել չգիտցող անձեր գանըլած ատեն Եսայի վարդապետ մ'ալ գտնըվիլը կը ցուցնէ, որ ատանկ տաղ մը մաքուր հայերէն լեզուով գրելու կարող է։ Կը մաղթենք 'ի բոլոր սրտէ, որ մեր սիրելի բարեկամ Եսայի վարդապետը կարող ըլլար միւս Միաբաններն ալ վարժելու և ուսցնելու։

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Տես՝ թիւ 129

Դժուար չէ հասկնալ, որ եթէ մի որոշեալ մարդու գործակատարութիւն ազդեցութիւն ունի հասարակութեան վերայ, այնուհետև այդ անձը և նորա գործակատարութիւնը պէտք է ենթարկուին հասարակաց կամ հասարակութեան դատողութեանը, քննողութեանը և դատաստանին։ Այդ գործակատարութիւնը կարող է լինել բազմօրինակ. դա բացայայտուում կամ գործերի կատարութեան, կամ թէ երևելի բարոյական աղդեցութեան մէջ, երբ որ մի անձը կրում իւր վերայ մի որոշեալ հոգևոր կամ աշխարհական իշխանութեան տասիճան. այս կարգին կարելի է դասակից առնել ուսուցիչքը և վարժապետը. կամ թէ այդ գործունէութիւնը բացայայտուում տաղան խօսքի մէջ։ Հրապարակախօսութիւնը և հանդիսական արտայայտութիւնը կարծիքների, և մտածութեան ազատութիւնը են ամենաբաւական ճանապարհքը, որով կարող է մարդկային հասարակութիւնը ազատել և զօրանալ և կատարելագործել իւր անձը[1]։ Երբ որ մի ժողովրդից խլած է, կամ թէ նորա մէջ չկայ ազատութիւն, այդ տեղ գոյանում ահաճութիւն, և սորանից յառաջանում ոչ թէ հետ զհետէ աճեցողութիւն արդարութեան և իրաւունքի գաղափարների, կամ թէ մի բարոյական յառաջխաղացութիւն, այլ անակ-

[1]) Աւաւել ընտիր մատենագիրքը, առաւել ընտիր մարդիկը տերութեան, առաւել ընտիր հեղինակները երևած են Ֆրանսայի մէջ այն օրերում, երբ որ այն տեղ եղել է ամենաշատ ազատութիւն մտքի և խօսքի։ Օգտակար ազդեցութիւնը հրապարակախօսութեան երևում է մանաւանդ, խաղաղացնելով միտքերը, երբ որ դաշտ զբաղած էին խռովեցուցիչ կռուածանքով, մի գուցէ քայքայվէին այս կամ այն կարգը բաների. Այս տեղ հասկացվում է ոչ այն հրապարակախօսութիւնը, երբ որ մի կողմը կարող է ձայն տալ և քարոզել ինչ որ հաճոյ է նորան, իսկ միւսը պարտ է լռել ֆիզիկական զօրութեան ջնի տակ, այլ մի հրապարակախօսութիւն և կարծիքի ազատութիւն որ պատկանում է ամենեցուն։ Այս բանը տեսանում ենք միշտ և մանաւանդ կեցութեան մէջ. զոր օրինակ մենք տեսանում է որ մի որոշեալ ծանօթ անձն նստում է նորա վերայ ծանր աչքով. որպէս թէ բարկացած էր որ և իցէ պատճառով. այդ տեղ յառաջանում է մի խռովեցուցիչ անհանդստութիւն, մինչև կը տեղեկանայիք դուք այդ տհաճութեան ստոյգ պատճառին, և որչափ ևս ծանրակշիռ լինէր այդ պատճառը, այնու ամենայնիւ թեթևանում է ձեր սիրտը, երբ որ տեղեկացած էիք դորան, քան թէ երբ որ դա մնում էր ձեզ անյայտ։ Այլև լռութիւնը միշտ տաւիթ է տալիս զանազան երկմտութիւնների. կարելի չէ հաւատալ այն մարդուն, որի դիտաւորութիւնը ծածկած է մեր աչքից։ Արդն կարող չէ ներգործել խելացի կերպով, երբ որ նա ներգործում է առանց գիտելու թէ ինչ խորհրդով։ Հրապարակախօս քննութիւնը ամենայն, այն և շատ մեծակշիռ խնդրի, որքան ևս ընդարձակ ու դժուարին լինէր դա, անտարակոյս ճանապարհ կը տայ նորա վճռին։

Դժուարութիւնքը յաղթահարվում են ոչ թէ վարագուրելով նորանց, այլ համաժողով ատատիկ ջանադրութեամբ. ինչ որ անկարելի է մինի համար, դորան կարող են հասանել շատերի ջանադրութիւնքը։ Երբ որ հրապարակաբար քննութիւն է լինում մի խնդրի կամ նիւթի վերայ, դժուարութիւններին հետ պատերազմելիս են հասարակութեան բոլոր զորութիւնքը և անցաղթելի մնում են այն դժուարութիւնքը, որ արդարև անցաղթելի են։ Հրապարակաբար քննողութիւնը մի նիւթի խնդրի թեթևացնում նոցա դործը, որանց հասանում վնաս նորան. թեթևացնում վեր կալնելով նոցա ուսերից ծանրութեան և աշխատութեան մի մասը։

նունների և սաստիկ դղրդմունք և յեղափոխութիւնք ։ Հրապարակախօսութիւնը և մտքի ազատութիւնը մանաւանդ առնելով այս և միւս պակասաւորութիւնքը հասարակութեան, կամ թէ մի մասնաւոր մարդու, տալով արդէն ցուցանում է հարկաւորութիւնը ուղղելու այդ պակասաւորութիւնքը. ուրեմն տանում է դէպ ի բժշկութիւն, և փրկում հիւանդ մարմինը իւր վախճանական կործանութենից ։ Եւրոպական մատենագրութեան մէջ կարելի է գտանել հազաւոր օրինակներ, որ հին սովորութեան պաշտող մարդիկը, լինելով բարի բանի և արդարութեան թշնամիք, պարտաւորում էին հրապարակախօսութիւնը որպէս աղբիւր հասարակաց թշուառութիւնների. որ իբրև թէ հրապարակախօսութիւնը պատճառ էր աւել թշնամանելու Եկեղեցին, Աստուած և այլն. բայց հասարակութիւնը տեսուց փորձով, որ դա մի լոկ բամբասանք էր ։ Արևմտեան աշխարհների մէջ հրապարակախօսութեան չլինելութիւնը էր պատճառ թշնամանելու եկեղեցին, իսկ անառակութիւնը, ագահութիւնը, անիրաւութիւնքը և բռնակալութիւնը այն տեղի հոգևորների և անհաձութիւնը ընդդէմ արևմտեան եկեղեցու, յառաջանում էին ոչ թէ հրապարակախօսութեան առաւելութենից, այլ պակասութենից. նորա հալածանքից Ինկվիզիցիոնի ձեռքով և բռնակալութեամբ ։ Պիտոյ է լինել կամ կոյր, կամ ամենևին տգէտ ; եթէ չկամենք տեսանել կամ իմանալ, թէ մի լիակատար, ամենահոյեաց հրապարակախօսութիւն, որպիսի զօր օրինակ կայ Անգլիայում, ամենից առաւել ձեռնտու է պահպանելու եկեղեցին, աթոռը, թագաւորութեան կարողութիւնը և այն մեծ յառաջադիմութիւնը Անգլիայի մէջ ։ Այն տեղ ամենայն կարգադրութիւն, ամենայն խնդիր նախ և յառաջ քննութեան տակ է ընկնում ժողովրդի ժամադրութեան տեղերում, որ ասվում են անգլիարէն միտինգ (Meeting, հանդիպմունք), տէրութեան զանազան մասներում, յայտնի և ազատաբար. ապա առաջարկում են Պարլամենտին (ազգային խորհրդարանի) ։ Իսկ յիշեալ Միտինգները ամենայն ազատութեամբ խօսում են բոլոր տէրութենական խնդիրների և իւրեանց բոլոր պիտոյքի վերայ. այդ միտինգների մէջ դուրս է երևում անգլիական ժողովրդի բոլորովին ազատ և ինքնիշխան կարծիքը ։

Այս բանիս տեղեակ է ամենայն օրինաւոր մարդ ։ Ապականում են և կործանում են ազգերը ոչ թէ նոքա, որ համարձակ և պատուելի կերպով, թէ տպագրութեամբ և թէ բերանի խօսքով հրապարակում են և հալածում են անկարգութիւնքը, գողութիւն, խաբեբայութիւն, երեսպաշտութիւն, անառակութիւն, խարդախութիւն ; այլ նոքա, որ պաշտպանում են անիրաւութիւնը և ամենայն վատթարութիւն ։ Կրօնը մեղաւոր չէ, եթէ հոգևոր դասու այս կամ այն անդամը անպիտան է. ուսումնարանները և գիտութիւնը մեղաւոր չեն, եթէ նոցա կառավարիչ գլուխները են անշնորհ և անպիտան մարդիկ. օրէնքը մեղաւոր չէ, եթէ դատաւորները խախտում են օրէնքը, կաշառք են ուտում և դէպ ի չարն են գործ դնում իւրեանց իշխանութիւնը ։ Անկարգութիւնք ամենայն տեղ կան, և ոչ մի պատուաւոր անձն չկամէր յանձն առնուլ կամ թագուցանել կամ թէ պաշտպանել նորանց ։ Այս անիրաւութիւնքը ծնանում են կամ կարգերի պակասաւորութենից, կամ թէ մասնաւոր մարդերի շահախնդրական և վատթար ձգտողութեններից ։ Առաջինի մասին, ամենայն հասկացող և Ճշմարիտ մարդու պարտականութիւն է մանաւանդ առնել այդ պակասութիւնքը, որ հեռացնեն դոքա. երկրորդի մասին, արժան է յայտնի կացուցանել և անխնայ պատուհասած առնել ամենայն վատթար ձգտողութիւն և անվայել գնացք ։ Այսպէս գնեաց վարվում են ամենայն Ճշմարիտ հայրենասէրք իւրեանցից կրթեալ թագաւորութեան մէջ, և ոչ մինը պատուելի և հասկացող մարդերից բոլոր աշխարհի մէջ համարձակվել չէ դեռ ևս պախարակել այս Ճանապարհը և շփոթել դորան բամբասանքի հետ ։ Բամբասում են Ճշմարտութիւնը ամենքեան նոքա, որ ծածկում են անիրաւութիւնը, կեղտոտ ձգտողութիւնը, անշնորհութիւնը, դատաստանական տեղեր երդվելով նոցա վերայ, և այդպէս խաբելով ժողովուրդը ։

Անգլիան մեծ պարտք է դնում Մալլեօրցի պատերազմական յաղթութեանը և Իսքանի հանճարին. բայց երբէք մոռանել չէ նա ծածկել այդ երկու մարդերի շահախնդրութիւնը և գողութիւնը թագաւորական գանձի ։ Ինչպէս մասնաւոր մարդու, նոյնպէս և ժողովրդի մէջ, հոգու Ճշմարիտ մեծութիւնը այն բանի մէջ է, որ նա խոստովանում է իւր պակասութիւնքը, որովհետև թագուցանել նորանց վնասական է միայն բարեյաջողէս աւել-

ված բնաւորութիւններ։ Նոքա որ դիտեն այս ճշմարտութիւնը, կարող չեն յանձն առնուլ դատապարտել այն մարդիկը, որ դուրս են հանում դէպ ի հասարակաց դատաստան, խաբէութիւնը, ստութիւնը, անշնորհութիւնը, գողութիւնը, անառակութիւնը, բթամտութիւնը, յիմար փառասիրութիւնը և երկրաքարշ հոգին։

Հրապարակախօսութիւնը և ազատութիւնը մաքի մի հատիկ բժշկական դեղն է այն ցաւերի և խոցերի որ արգելառիթ են մեր յառաջադիմութեան։ Ժողովրդին վտանգաւոր են գաղտնի խոցերը որ ուտում ու մաշումեն հասարակաց մարմինը, վտանգաւոր է սուտ ամօթխածութիւնը որ ծածկում է այդ խոցերը ընկերների և սնապարծութեան ու քաղցրաբանութեան պատրուակի տակ. վերջապէս վտանգաւոր են այն մարդիկը որ փառաւոր հանդերձի տակ չկամին տեսանել մարդը և կասկածելով թէ մի գուցէ վիրաւորեն նորա կամ նորա ինքնասիրութիւնը, պատժումեն քաղաքացի մարդու ազատութիւնը որ է ամենայն կարելի ազատութիւնների աղբիւր և հասարակութեան հաստատութեան սիւն։ Քաղաքացի մարդու ազատութիւնը այն բանի մէջ է, որ նա զրկանք յանձն առնու հասարակաց օգտի համար և համարձակաձայն քարոզէ պատիւը, բարին և արդարութիւնը. իսկ շողոքորթել մեծատունքը, ստորաքարշ լինել չէ համարվում ազատութիւն, որովհետև այդ բանը կարօտ չէ մի առանձին քաջութեան։

Հրապարակախօսութիւնը ամենալաւ դեղթափն է բոլոր բարոյական ցաւերի և արատների որ ճնշումեն բնական քանքարներով ճոխ Հայ ազգի կենդանի մարմինը։ Հրապարակախօսութիւնը կը հալածէ այդ ցաւերը և խոցերը, կը ցուցանէ հնարները փրկութեան այդ կորստական ախտերից։

Հրապարակախօսութիւնը կը բանայ մեր աչքերը և կ՚ուղղէ մեր ճանապարհը դէպ ի ամենայն վերին և օգտակար բան, կը պայծառացնէ բազմութեան միտքը, կը տայ մեզ գրահմտութիւն և դորա հետ միասին գիտութիւն և լուսաւորութիւն, հարստութիւն, թէ բարոյական և թէ նիւթական կատարելութիւն և բարիք։

Ով որ ընդդիմանումէ հրապարակախօսութեանը, նա կամ չէ հասկանում ճշմարտութիւնը, կամ թէ թշնամի է ամենայն բանի, որ պիտոյ է սուրբ և սիրելի լինէր ամենայն պատուաւոր մարդու, ինչ ազգի ևս պատկանումէր դա։

Մ. Մ. Միանսարեանց։
(Թիֆլիզից.)

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ամսոյս 4ին Ընդհանուր Ժողով ըլլալով ամեն խորհուրդներու և ժողովներու գործառնութեանց յայտագիրները կարդացվեցան. այս յայտագիրները ինչպէս ամեն մարդու այնպէս և մեզի շատ նիւթ կը մատակարարեն հին վարչութիւնը նորին հետ բաղդատելու և նորին առաւելութիւնները ցուցընելու։

Այս համարատուութենէն ետև Ընդհանուր Ժողովը թէ Կրօնական և թէ Քաղաքական Ժողովոց անդամներուն կէսին ելնելուն վիճակահանութիւնն ըրաւ. և այն օրէն ետև անոնց յաջորդելու անձանց ընտրութիւնն ընելու համար որոշվեցաւ, որ ամսոյն 7ին Ընդհանուր Ժողով ըլլալով քուէարկութիւնն ըլլայ. նոյն օրը մեծագոյն մասը չըլլալով միաձայնութեան և ատեան բանալու հարկ չը տեսնելով միայն քուէարկութիւնն ըլլայ. բայց բացարձակ առաւելութեամբ մի միայն Կէրկէլեան Պ. Յովհաննէս Քաղաքահանեանն ու Վարդապետեան Ներսէս վարդապետ Կրօնականին ընտրված ըլլալով մնացած անդամոց համար շատ քուէ վաստկողներէն պէտք եղածին կրկնապատիկ թիւով ընտրելներու ցանկ կազմվեցաւ Ընդհանուր Ժողովականացն, որոնք նորէն քուէ դրկելով այսօր ամսոյս 11ին հինգ քննիչներու և Ընդհանուր Ժողովի դիւանին ներկայութեամբը քուէհամարն եղաւ, որուն արդիւնքն է աս.

Քաղաքական ժողովին համար։

		Քուէ.
Պարոնայք.	Ալանեան Մանուկ.	147
»	Ալանեան Ստեփան պէյ.	111
»	Տատեան Սիմոն պէյ.	107
»	Միւհէնտիսեան Մարտիրոս.	93
»	Աղաթօն Միքայէլ.	95
»	Խօրասանճեան Գէորգ.	92
»	Երկանեան Յարութիւն էֆէնտի.	91
»	Թըքթաղեան Մինաս էֆէնտի.	88
»	Մալճեան Մկրտիչ.	86

Կրօնական ժողովին համար։

	Քուէ.
Կարապետ վարդապետ Իւսկիւտարի.	127
Տէր Սահակ Օրթագիւղի.	121
Տէր Գրիգոր Սամաթիոյ.	115
Տէր Յարութիւն Պէօյիւքտէրէյի.	111
Տէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոս.	109
Տէր Յարութիւն Ղալաթիոյ.	77

Առաջիկայ թուով մեր պարտքը թէ հիներուն և թէ նորերուն.

ԽՄԲԱԳԻՐ=ՏՆՕՐԷՆ
Յ. Գ. ՍԼՎԱՃԵԱՆ

Ի ՂԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՓՈՂՈՑ ԹԻՒ 17

ՀԱՆԴԻՍԻՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԷ՛ ՏՊԱՐԱՆԸ.